**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ**
**ՏԵՂԱԿԱԼ**

---

375010, ք. Երևան, Վ. Սարգսյանի փ. 5

№ 30/4-202-12

«02» 08 2012թ.

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի ղեկավար
պարոն **Դ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ**

*Ի պատասխան Ձեր 02.07.2012թ.*
*02/10.5/9177-12 թվակիր գրության*

*Հարգելի՛ պարոն Սարգսյան*

ՀՀ գլխավոր դատախազությունում քննարկվել է «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» (Կ-1318-27.12.2011-ՊԻ), ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» (Կ-810-02.02.2010-ՊԻ) օրենքների նախագծերը: Գտնում ենք, որ վերը նշված նախագծերը նույն խմբագրությամբ նպատակահարմար է կրկին անգամ ներկայացնել Ազգային ժողով: Օրենքների նախագծերի՝ Ազգային ժողովում քննարկման ժամկետների և Օրենքների նախագծերը Ազգային ժողովում քննարկելիս ՀՀ կառավարության պաշտոնական ներկայացուցչի վերաբերյալ նոր առաջարկություններ չկան:

*Հարգանքով՝*

*Արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական* **Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ**

Ռ. Ավագյան

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
072-21139
15. 08. 12թ.